ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИИ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА ГАЙ

« 06 » հոկտեմբերի 2011 թ.
թիվ 154

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի ղեկավարի 2011թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունը:

Առդիր 8 թերթ:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ 040 4223

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
9409-11
06 10 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
« 05» սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 28

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Վարդան Վաղինակի Խռոյանի 2011 թվականի սեպտեմբերի 6-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Վարդան Խռոյանին տալ թույլտվություն Գայ համայնքի ԿՕ 406-011 հողամասում կատարելու շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել 3 ամսվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական
հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 14 » սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 29

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 24-ը դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1893-Ն որոշումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող 372.0քմ հողատարածքը (ԿՕ 04-033-008-004) վաճառել աճուրդային կարգով:
2. Վաճառվող հողատարածքի յուրաքանչյուր հեկտարի համար մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ը, յուրաքանչյուր քայլը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 16» սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 30

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐՆԱԶ ԲԱԴՐԻ ՕԶՄԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի բնակչուհի Սարնազ Օզմանյանը դիմել է Արմավիրի մարզ, գ. Գայ Իսահակյան 2 փողոց, թիվ 17 հասցեում գտնվող բնակավայի, տնամերձ օրինական 1500.0 քմ հողամասին կից 263.0 քմ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թվականը, համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հնարապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքով.

Որոշում եմ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզ, գյուղ Գայ, Իսահակյան 2 փողոց, թիվ 17 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Սարնազ Օզմանյանի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 1500.0քմ օրինական հողամասին կից 263.0 քմ զբաղեցրած հողամասի և օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շինությունների նկատմամբ:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Սարնազ Օզմանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական
հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 23» սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 31

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Սիրանուշ Ղարիբյանի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Սիրանուշ Ղարիբյանին տալ թույլտվություն Գայ համայնքի ԿՕ 04-033-212-021 հողամասում կատարելու շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել 1 տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական
հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 26 » սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 32

ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սիրանուշ Ղարիբյանի 2011 թվականի սեպտեմբերի 20-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող ԿԾ 04-033-212-021 և ԿԾ 04-033-212-020 գյուղ. արտադրական նշանակության ձկնաբուծարաններին տալ հասցե՝ Երևանյան փողոց, թիվ 39 և Երևանյան փողոց, թիվ 41:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ « 16» սեպտեմբերի 2011թ.-ի

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ N 14

ԱՆԱՀԻՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158, 159-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գայ համայնքի ղեկավարի օգնական՝ իրավաբանական գծով, Անահիտ Տերտերյանի 2011 թվականի սեպտեմբերի 15-ի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Գայի գյուղական համայնքի ղեկավարի օգնական՝ իրավաբանական գծով, Անահիտ Տերտերյանին տրամադրել 2011 թվականի ամենամյա արձակուրդը՝ սեպտեմբերի 19-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ, 24 աշխատանքային օր տևողությամբ (20 աշխատանքային օր՝ նվազագույն և 4 լրացուցիչ օր):
2. Անահիտ Տերտերյանին աշխատանքի մեջ համարել 2011 թվականի հոկտեմբերի 24-ից:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Գայ համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական
հոկտեմբերի 6-ին
գ. Գայ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԳԱՅ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

« 02» սեպտեմբերի 2011 թվականի

Որոշում N 27

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Ծովինար Ֆրանգուլյանի 2011 թվականի օգոստոսի 31-ի դիմումը.

Որոշում եմ՝

1. Արմավիրի մարզի Գայ համայնքի բնակչուհի Ծովինար Ֆրանգուլյանին տալ թույլտվություն Գայ համայնքի Խաչատրյան 1 փողոց, տուն 1 հասցեում իրականացնելու շինարարական աշխատանքներ:
2. Շինարարական աշխատանքները իրականացնել 1 տարվա ընթացքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Գայի գյուղական համայնքի ղեկավար՝ Ս. Մարկոսյան

2011 թվական
հոկտեմբերի 6-ին
գ. Գայ